



**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
էկոլոգիական իրավունքի գիտառուսումնական  
կենտրոնի պարբերական**

2010 թվական, ապրիլ-հուլիս, N 2



## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

### **ՀՀ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ**

Մշակվել է «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի լրացումների և փոփոխությունների նախագիծ...էջ 2-4

ՀՀ-ում սկսվել է «Ծրջակա միջավայրի պահպանության մասին» ՀՀ օրենսդրի նախագծի մշակման գործընթաց...էջ 5-6

«Գիլան» պետական արգելավայր. իրականություն օրենքի թիկունքում...էջ 7-8

Նախատեսվում է ընդունել բնապահպանական կրթության, դաստիարակության և իրագիւմնան 2011-2015 թվականների միջցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում...էջ 9-10

### **ԷԿՈ-ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԻՏԱՐԿՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

Կենտրոնի դասընթացներ...էջ 11-13

Զննարկում Նորարարաշենի աղբավայրում կենսագի արտադրության վերաբերյալ...էջ 14-15

Հայաստանի Օրենս կենտրոնների հանդիպումը Էկո-իրավունքի կենտրոնում...էջ 16

### **ՀԵՏԱԶՐՅԻՐ Է ԽՍՄՆԱԼ**

Յուրական աղոտուված տարածքների մաքրումը "Դեվերոիլ միկրոօքանիզմներով"- այժմ կիրառվում է նաև Հայաստանում...էջ 17-18

### **«ԿԱՆԱՉԱՓԱՅԼ» ԺՊԻՏՆԵՐ...էջ 19**



## ԲԱԺԻՆ 1

### ՀՀ ԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

I. Մշակվել է «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի լրացումների և փոփոխությունների նախագիծ

ՀՀ բնապահպանության նախարարության ինտերնետային կայքում սույն թվականի օգոստոսի 19-ին շահագրգիռ հասարակությանն է ներկայացվել «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Բաղկացած լինելով 18 հոդվածներից՝ Օրենքի նախագծով առաջարկվում է կատարել մի շարք փոփոխություններ և լրացումներ, որոնք ենթարաբար պետք է ուղղված լինեն ոլորտի իրավական կարգավորման բարելավմանը: Այս ենթարությունը բխում է այն կանխավարկածից, որ ցանկացած իրավական ակտի փոփոխության և լրացման նպատակներից է, հաշվի առնելով իրավական ակտի դրույթների իրացման փորձը, գիտության



ոլորտում խնդրո առարկայի վերաբերյալ արձանագրված ձեռքբերումները, համապատասխանեցնել դրա դրույթները արդի պահանջներին և ստեղծել հարաբերությունների կարգավորման համապարփակ իրավական հիմք:

Սակայն Օրենքի նախագծի ուսումնասիրության արդյունքում կարելի է ձևավորել երկակի կարծիք: Ներմուծելով բավականին նոր կատեգորիաներ, ընթացակարգեր, այն միաժամանակ բավականին բարդացրել և խճել է փորձաքննության ընթացակարգը:

Օրենքի նախագծով առաջարկվող փոփոխություններն ու լրացումներն ընդհանուր առմամբ հետևյալ բնույթի են:

- Օրենքի 1-ին հոդվածի հասկացությունները առաջարկվում է լրացնել նոր հասկացություններով. ազդեցություն, անդրսահմանային ազդեցություն, ազդակիր երկիր, ծագման երկիր, համալիր արտադրություն, հասարակայնություն և այլն:
- Փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության տեսակները նախագծի ընդունումից հետո կդասակարգվեն “Ա”, “Բ” և “Գ” կատեգորիաների՝ ըստ բնագավառների և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության աստիճանի: Օրինակ՝ ընդերքաօգտագործման ոլորտում ծավալվելիք գործունեությունը կարող է դասվել “Ա” կամ “Բ” կատեգորիաներին՝ կախված արդյունահանվող օգտակար հանածոյի տեսակից:
- Փորձաքննության ամբողջ գործընթացը նախագծում բաժանված է երկու փուլի՝ նախնական և հիմնական: Այս փուլերից յուրաքանչյուրը բաղկացած է հարաբերականորեն որոշակի և միմյանց հաջորդող գործողություններից:
- Փորձաքննության նախնական փուլի շրջանակներում կարգավորվում են նախատեսվող գործունեության ծանուցման, ձեռնարկողի և ազդակիր համայնքի դեկավարի կողմից ծանուցման վերաբերյալ ԶԼՄ-ների միջոցով տեղեկությունների հաղորդման, կարծիքների (առաջարկությունների և դիտողությունների) ներկայացման և այդ փուլի ավարտին ընդունվող որոշումների (նախատեսվող գործունեության իրականացման անթույլատրելիության, հիմնական փուլի փորձաքննության ենթակա լինելու կամ եզրակացության տրամադրման մասին) հետ կապված հարաբերությունները:
- Օրենքի նախագծի 6-րդ հոդվածի համաձայն փորձաքննության հիմնական փուլում իրականացվում է նախատեսվող գործունեության ազդեցության գնահատում: Օրենքի նախագծի փոփոխություններից է նաև փորձաքննության համար անհրաժեշտ փաստաթղթերի և հաշվետվությունների բովանդակության ամրագրումը:
- Օրենքի նախագծի ընդունումից հետո ավելի մանրամասն կկարգավորվեն անդրսահմանային ազդեցություն ունեցող գործունեությունների փորձաքննության կապակցությամբ առաջացող հարաբերությունները: Նախագիծը նախատեսում է լրացնել Օրենքը 2.1 նոր գլխով, որի շրջանակներում կարգավորվելու է անդրսահմանային ազդեցության փորձաքննության իրականացման ընթացակարգը, սահմանվելու են անդրսահմանային ազդեցության գնահատմանը ներկայացվող ընդհանուր պահանջները:

Չնայած վերոգրյալ բոլոր նորամուծություններին՝ օրենքի նախագիծը ունի մի շարք թերություններ, որոնք անհրաժեշտ է շտկել՝ դրա գործողության ընթացքում տարընթերցումներից և հակասական մեկնաբանություններից խուսափելու նպատակով:

1. Անհասականալի է, թե ինչպիսի կոնցեպցիայի հիման վրա են առաջադրվել այս փոփոխությունները:
2. Օրենքում հստակ չէ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում հասկացությունների փոխհարաբերակցությունը, իսկ այդ անհստակությունն ավելի է խորանում գործող Օրենքի և նախագծի հիմնական հասկացություններ վերնագրով 1-ին հոդվածում դրանց սահմանումների բացակայության հետևանքով:
3. Տարատեսակ մեկնաբանությունների տեղիք կարող է տալ նաև Նախագծի 5-րդ հոդվածով որպես լրացրում ամրագրված 6.1 հոդվածի 8-րդ մասի նախատեսվող գործունեության իրականցումն անթույլատրելի համարելու լիազոր մարմնի որոշման հիմքերը /օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված բնապահպանական սահմանափակումներ, ինչպես նաև ազդակիր համայնքի կարծիք/:
4. Օրենքում առկա են նաև բովանդակային և խմբագրական բնույթի այլ թերություններ:



## II. ՀՀ-ում սկսվել է «Ծրջակա միջավայրի պահպանության մասին» ՀՀ օրենսգրքի նախագծի մշակման գործընթացը:

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի նիստի N 33 արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել ՀՀ շրջակա միջավայրի պահպանության գործողությունների երկրորդ ազգային ծրագրին, որի գործողությունների ծրագիր մասի «Բնապահպանական քաղաքականություն, օրենսդրություն և ինստիտուցիոնալ հզորություններ» բաժնի 3-րդ կետով նախատեսված է 2010-2012 թվականների ընթացքում «Ծրջակա միջավայրի պահպանության մասին» ՀՀ օրենսգրքի նախագծի մշակում և դրա կիրարկումն ապահովող իրավական ակտերի նախագծերի մշակման ծրագրային փարերի կազմում:

Նախատեսված գործողության կատարման նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի 17 օգոստոսի 2010 թվականի N 645-Ա որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբի գործունեության արդյունքում պետք է մշակվի «Ծրջակա միջավայրի պահպանության

մասին» ՀՀ օրենսգրքի նախագիծը, որպես ՀՀ-ում բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության կապակցությամբ առաջացող հարաբերությունները կարգավորող հիմնարար, ելակետային իրավական ակտ: Դրանում պետք է ամրագրվեն այն սկզբունքային ինստիտուտները, որոնց իրացմամբ համալիր կարգավորման կենտրոնակեն ոլորտի հասարակական հարաբերությունները: ՀՀ վարչապետի որոշմամբ միջգերատեսչական հանձնաժողովի անդամների վրա դրվել է պարտականություն առաջիկա 6 ամիսների ընթացքում (մինչև սույն թվականի դեկտեմբեր ամիսը) ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Ծրջակա միջավայրի պահպանության մասին» ՀՀ օրենսգրքի նախագծի հայեցակարգային մոտեցումները:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Էկոլոգիական իրավունքի գիտառության կենտրոնը հայտնել է պատրաստակամություն ակտիվություն մասնակցելու

նախագծի մշակման աշխատանքներին և հույս է հայտնում, որ մշակվելիք փաստաթուղթը կկարողանա արտացոլել հասարակության տարբեր խմբերի շահերը և գտնել դրանց համադրման գործուն մեխանիզմներ, ինչպես նաև հաշվի առնել ՀՀ բնապահպանական օրենսդրության իրացման 20 ամյա փորձը:

### III. «Գիլան» պետական արգելավայրը իրականություն օրենքի թիկունքում:

Վերջին ամիսների ընթացքում հասարակությանը և հատկապես բնապահպանական հանրությանը հուզող խնդիրների շքերթը գլխավորում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի սահմաններում գնտվող» «Գիլան» պետական արգելավայրի տարածքում «Հովազաձոր» ՍՊԸ-ի կողմից իրականացվող ապօրինի շինարարությունը։ Այս հարցի առնչությամբ որոշ լրատվամիջոցների և բնապահպանության ոլորտի բազմաթիվ գործիչների ակտիվությունը, որը զերմ աջակցություն է ստանում պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների կողմից, առաջին հայացքից լավատեսություն է ներշնչում. պատրաճ է ստեղծվում այն մասին, որ վերջապես միջազգային կազմակերպությունների աջակցությամբ հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների միջև սկսված երկխոսությունը կարող է տանել կառուցդական լուծման։ Սակայն խնդրի և դրա հետ կապված զարգացումների հանգամանալից ուսումնասիրությունն ի չիք է դարձնում նմանատիպ ենթադրությունները։ Իրականում բարի գործի բոլոր նվիրյալների միահանուր ջանքերով հարցի լուծման ուժին և շիտակ ճանապարհը քողարկվում է



առարկայազուրկ աղջուկի և շոումների ծանր վարագույրով։

Քննարական մեկնաբանությունից անցնելով իրավական վերլուծության՝ նախ հիշատակենք այն փաստերը, որոնք կարծեցյալ հիմքեր են ստեղծել ներկայիս իրավիճակի համար։ ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 24-ի «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում «Գիլան» պետական արգելավայր ստեղծելու մասին թիվ 673-Ն որոշմամբ՝ բուսական և կենդանական աշխարհի պահպանությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով «Խոսրովի անտառ» պետական արգելոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կազմում ստեղծվել է «Գիլան» պետական արգելավայր, որին ամրացվել է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի 118 հա մակերեսով «Բայրուրդ» կոչվող տեղամասը։ Այնուհետև՝

ՀՀ կառավարության 2007թ. օգոստոսի 9-ի թիվ 930-Ն որոշմամբ հաստատվել է նորաստեղծ արգելավայրի կանոնադրությունը: Զնայած նշված որոշումներն ընդունվել են դեռևս 3 տարի առաջ՝ հանրությունը սկսեց մտահոգվել բոլորովին վերջերս. այն բանից հետո միայն, եթք արգելավայրի տարածքում սկսվեցին կառուցապատման աշխատանքները: Զցանկանալով թերագնահատել բնապահպանների կատարած աշխատանքը, նշենք միայն, որ դրանում ուսցինալ ուղղությունները դժվար նշմարելի են: Բանն այն է, որ «Քննության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը, սահմանելով պետական արգելոցի իրավական ռեժիմը, դրա կազմում հատուկ պահպանվող այլ կատեգորիայի տարածքի գոյության հնարավորություն չի նախատեսում: Այլ կերպ ասած՝ պետական արգելոցի տարածքում, ի տարբերություն ազգային պարկերի, գործում է պահպանության միասնական ռեժիմ, հետևաբար՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում «Գիլան» պետական արգելավայրի ստեղծումը հակասում է օրենքի դրույթներին: Այս իմաստով առկա է հակասություն նաև ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի հետ համաձայն որի՝ «Օրենքները պետք են համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք են համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին»: Նշված

հակասությունների փոքրիկ կծիկը քանդող թելը տանում է ուղիղ ՀՀ վարչական դատարան, որտեղ հարցի լուծումը հնարավոր է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի կարգով:

Սույն նյութի իրապարակման նապատակը ամենին էլ պետական կառույցներին կամ հասարակական կազմակերպություններին պահարակելը չէ, այլ ընդամենը առկա խնդիրը իրավունքի լույսի ներքո ներկյացնելն է: Հուսով ենք՝ այս տեղեկատվությունը օգտակար կլինի խնդրով գրաղվողների համար, և իրականությունը երկար չի բարնվի օրենքի թիկունքում:

**IV. Նախատեսվում է ընդունել քնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման 2011-2015 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում:**

ՀՀ կառավարությունը 2009 թվականի հոկտեմբերի 20-ի N 19 արձանագրային որոշման 3-րդ կետի կատարման նապատակով ՀՀ քնապահպանության նախարարությունը մշակել է «Քնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգից բխող 2011-2015 թվականների միջոցառումների ծրագիրը»: Այն 5 խուճք միջոցառումների ամբողջություն է, որոնք ընդգրկում են ինչպես կրթության, դաստիարակության և իրազեկման օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքերի կատարելագործմանն, այնպես էլ հզորությունների ստեղծմանը, կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանը և միջազգային համագործակցությանն ուղղված գործողություններ: Նախագծով 2011-2015 թվականների ընթացքում նախատեսվում է վերլուծել և կատարելագործել քնապահպանական կրթության և դաստիարակության ինստիտուցիոնալ և օրենսդրական համակարգը, 2. մշակել քնապահպանական կրթության նորացված մեթոդաբանություն կրթական բոլոր մակարդակների համար, 3. մշակել և



ներդնել հասարակության լայն խավերի համար քնապահպանական ոչ ֆորմալ կրթության, դաստիարակության և իրազեկման տեղեկատվական, նյութատեխնիկական և ֆինանսական ապահովման, քնապահպանական կրթություն և դաստիարակություն իրականացնող բոլոր մասնագետների վերապատրաստման ծրագրեր և այլն:

ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Էկոլոգիական իրավունքի գիտառումնական կենտրոնը ներկայացրել է դիտողություններ և առաջարկներ, որոնք վերաբերում էին ինչպես նախագծում առկա ձևակերպումների բարելավմանը և գործողությունների կատարման համար նախատեսված ժամանակացույցին, այնպես էլ կատարվելիք մի շարք միջոցառումներ իրականացման նպատակահարմարությանը:

Ընդհանուր առմամբ նախագծում նախատեսված  
միջոցառումների ուղղվածությունը կարելի է համարել  
դրական և դրանց իրականցման դեպքում կարելի է  
ակնկալել քնապահպանակն կրթության որակի  
բարելավում:

## **ԲԱԺԻՆ 3**

### **ԵԿՈ-ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԻՏԱՌԽՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

#### **I.Կենտրոնի դասընթացները**

Եկոլոգիական իրավունքի հարցերի վերաբերյալ ուսուցումը և տարրեր մասմագիտական խմբերի մոտ իրազեկվածության մակարդակի բարձրացումը շարունակում է մնալ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտառուսումնական կենտրոնի գործունեության առանցքային ուղղություններից մեկը: Անցնող ամիսների ընթացքում դատավորների և ՀՀ բնապահպանական պետական տեսչության աշխատակիցների համար կազմակերպված դասընթացները, ինչպես նաև դրանց շարունակականության ապահովմանն ուղղված քայլերը ասվածի վառ ապացույցն են:

#### **Դասընթաց դատավորների համար**

2010թ. ապրիլի 26-27-ը Կենտրոնը ՀՀ դատական դպրոցի հետ համատեղ դասընթաց անցկացրեց ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների 10 գործող դատավորների և 8



թեկնածուների համար: Դասընթացին մասնակցեցին և ներկաներին ողջունեցին ԵԱՀԿ երևանյան գրասենյակի փոխդեսպան պարոն Ջարել Հոփսբրան և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան պարոն Գագիկ Ղազինյանը, ովքեր բարձր գնահատեցին Կենտրոնի դերակատարությունը շրջակա միջավայրի պահպանության խնդիրներով զբաղվող տարրեր կառույցների և մասնագետների մոտ իրավական գիտելիքների տարածման գործում:

Օրակարգում ընդգրկված հարցերը շոշափում էին պրակտիկայում առաջացող ամենատարբեր իրավական խնդիրներ, որոնք առաջանում են Եկոլոգիական օրենսդրության նորմերի

մեկնաբանության և կիրառման առնչությամբ: Գործող և ապագա դատավորների համար դասընթացի կարևորությունն առանձնանում էր նրանով, որ վերջիններս՝ որպես իրավակիրառողներ, անմիջական ազդեցություն ունեն երկրում իրավական մշակույթի ձևավորման վրա: ՀՀ դատական դպրոցի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ դատավորների համար անցկացվող դասընթացները պարբերական են լինելու, և ցանկալի կյինի մասնակցիների բվում տեսնել նաև ՀՀ վարչական և վճռաբեկ դատարանների դատավորներին:

### ***Դասընթաց ՀՀ բնապահպանական պետական տեսչության աշխատակիցների համար***

Հաջորդ դասընթացը կազմակերպվել էր Կենտրոնի և ՀՀ բնապահպանության նախարարության համատեղ նախաձեռնությամբ և ուղղված էր Էկոլոգիական իրավունքի մի շարք խնդիրների վերաբերյալ ՀՀ բնապահպանական պետական տեսչության աշխատակիցների իրազեկվածության մակարդակը բարձրացնելուն: Դասընթացի օրակարգը ներառում էր հարցերի այնպիսի շրջանակ, որոնք պրակտիկայում հաճախ բարդություններ են առաջացնում՝ կապված ինչպես իրավական ակտերի անկատարության, այնպես էլ իրավակիրառողների իրազեկվածության ոչ բավարար մակարդակի հետ:

Մասնակիցների կողմից բարձրացված բազմաթիվ խնդիրներ վերաբերում էին հայտնաբերված իրավախախտումների որակման, վարչական վարույթի հարուցման և ընթացքի, պատասխանատվության միջոցների կիրառման առնչությամբ ծագող հարցերի:

Կենտրոնի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ համագործակցությունը ՀՀ բնապահպանական պետական տեսչության հետ կշարունակվի նաև պրակտիկ խնդիրների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու ձևաչափով: Իսկ 2010թ. երկրորդ կիսամյակում համապատասխան դասընթացներ կանցկացվեն նաև տեսչության տարածքային մարմինների աշխատակիցների համար:

### ***Համագործակցություն ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ***

Բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության գործում հանրապետական գործադիր մարմիններից բացի կարևորելով նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների դերակատարությունը՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Էկոլոգիական իրավունքի գիտառումնական կենտրոնը մշակել է դասընթացի ծրագիր, որն արժանացել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության

հավանությանը: Դասընթացի նպատակն է աջակցել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներուժի հզորացմանը՝ իրազեկության մակարդակի բարձրացման միջոցով:

Ծրագիրը կմեկնարկի հոկտեմբերին Հրազդանում, իսկ մինչև տարեվերջ երկօրյա դասընթացներ կկայանան հանրապետության բոլոր մարզենտրոններում:

### ***Ուսումնական մոդուլներ***

Մասնագիտական տարրեր խմբերի համար կազմակերպվող ավանդական դարձած դասընթացներից բացի, Կենտրոնը մշակել է նաև ուսումնական մոդուլ աշակերտների համար, որի նպատակն է երեխաներին փոխանցել որոշակի գիտելիքներ մարդու եկոլոգիական իրավունքների, շրջակա միջավայրի պահպանության և բնօգտագործման ոլորտում գործող հիմնական իրավական սկզբունքների, ինչպես նաև ստանդարտ իրավիճակներում անհրաժեշտ վարքագծի վերաբերյալ: Դասընթացը նախատեսվում է անցկացնել այն մարզերում, որտեղ գործում են շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցություն ունեցող խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ:

## **II. Չենագագիւմ Նուրարաշենի աղբավայրում կենսագագի արտադրության վերաբերյալ**

Ս.ք. մայիսի 16-ին ԵՊՀ էկոլոգիական իրավունքի զիտառումնական կենտրոնի կազմակերպած կլոր սեղանի օրակարգում էր Նուրարաշենի աղբավայրում կենսագագի արտադրության խնդիրը, օրվա բանախոսն էր՝ ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ պարոն Արամ Գարբիելյանը։ Միջոցառման նպատակն էր ներկաներին իրազեկել Նուրարաշենի աղբավայրում ճապոնական «Շիմիձու» կորպորացիայի կողմից 2009թ. հոկտեմբերից իրականացվող ծրագրի էռոյթան, նպատակների և խնդիրների վերաբերյալ՝ շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից։

Պարոն Գարբիելյանը պարզաբանեց ծրագրի նշանակությունը Կիոտոյի արձանագրության շրջանակներում գործող մաքուր զարգացման մեխանիզմների գործառման և ստանձնած պարտավորությունների կատարման տեսանկյունից, ինչպես նաև կենսագագի արտադրությանն առնչվող տնտեսական, էկոլոգիական, սոցիալական խնդիրները, էլեկտրաէներգիայի արտադրության նպատակահարմարության հարցը, ակնկալվող շահույթի և ծախսերի վերլուծությունը, ծրագրի հեռանկարները և մի շարք այլ հարցեր։



Բանախոսի հավաստմամբ՝ միջոցների բացակայության պատճառով տարիներ շարունակ աղբավայրում կուտակված երևան քաղաքի կոչտ քափոնները վերամշակման չեն ենթարկվել, ինչի հետևանքով տեղանքից մթնոլորտ արտանետվող գազի ծավալների նկատմամբ հսկողություն չի իրականացվում, իսկ ներկայիս պայմանները վտանգ են ներակայցնում Նուրարաշենի և հարակից համայնքների բնակչության առողջության համար։ Ավելին, աղբավայրից արտանետվող գազի հիմնական բաղադրիչը մեթանն է, որն ունի 21 գլորալ տաքացման պոտենցիալ, ուստի կենսագագի արտադրության ծրագրի կարևորությունը անգնահատելի է։

Ծրագրի առաջին փուլի նպատակն աղբավայրային գազի որսման և այրման համակարգի տեղադրումն է, որը բաղկացած է գազի հավաքման ուղղաձիգ հորերից, գազի դրենաժի հորիզոնական համակարգից, գազի հավաքման խողովակներից,

հերմետիկ ծածկույթից, չափիչ սարքավորումներից, օդամոլիչներից և ջահից: Ըստ պարուն Գաբրիելյանի՝ այս համակարգը թույլ է տալիս ակնկալել արտանետվող գազի օգտահանման 60% արդյունավետություն:

Ներկայում ծրագիրն իրականացվում է աղբավայրի 6.5 հա մակերես ունեցող տարածքում, որը ծածկված է հողի շերտով և ցանկապատված է՝ կենդանիների և մարդկանց մուտքը կանխսելու նպատակով:

Բանախոսի հաղորդած հարուստ տեղեկատվությունը ակտիվ քննարկումների առիթ դարձավ մասնակիցների միջև, որոնց թվում էին ոչ միայն ուսանողներ, այլ նաև շահագրգիռ նախարարությունների ներկայացուցիչներ, զիտնականներ և անհատ մասնագետներ:

Կենտրոնը շարունակում է հետևել արդի բնապահպանական խնդիրներին, որոնց մասին տեղեկատվություն կհարապարակվի պարբերականի առաջիկա թողարկումներում:

**III. Հայաստանի Օրիու կենտրոնների  
համակարգողների հանդիպումը Եկո-իրավունքի  
կենտրոնում**

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Էկոլոգիական իրավունքի գիտառուսումնական կենտրոնում կայացած Օրիու կենտրոնների համակարգողների հանդիպում՝ Հանդիպման առաջին մասը նվիրված էր Օրիու կենտրոնների հետագա իրավական կարգավիճակին և զարգացման հեռանկարներին:

Հանդիպման երկրորդ մասում տեղի ունեցավ քննարկում Օրիուի կոնվենցիայի դրույթների իրացման կապակցությամբ ՀՀ-ում առկա հիմնախնդիրների վերաբերյալ:

Մասնավորապես քննարկվեցին հասարակայնության ծանուցման և հասարակայնության մասնակցության արդյունավետ գործիքների, Էկոլոգիական տեղեկատվության տարածման Էլեկտրոնային միջոցների, արդարադատության մատչելիության հետ կապված հիմնախնդիրները:

Մասնակիցներին հատկապես մտահոգում էր միմյանց հետ տեղեկատվության փոխանակման և Օրիու կենտրոնների ինտերնետային կայքը անհրաժեշտ, օգտակար և հանրամատչելի նյութերով հարստացնելու ուղիների մշակումը:






## ԲԱԺԻՆ 4

### ՀԵՏԱԶՈՐՔԻՐ Է ԻՍՄԱՍԼ

#### I. Յուղոտ տարածքների մաքրումը "Դեվերոիլ միկրորգանիզմներով":

"Դին Գոլլ Մայնինգ Քամփինի" ՓԲԸ-ի Բնապահպանության բաժինը 2009թ - բափոնների կառավարման ծրագիրը կազմելիս ծեռնամոլիս եղավ իրականացնելու բնապահպանական միջոցառում՝ ընկերության գործունեության ընթացքում առաջացող յուղոտված հողերի, ավազների և լաքերի մաքրման ուղղությամբ: Մաքրման անթափոն տարրերակ ընտրվեց բափոնների մաքրման բիոլոգիական եղանակը՝ համագործակցելով ոռուական "Սիտիստրոյ" ԲԲԸ-ի հետ, որը Դեվերոիլ միկրորգանիզմների միակ պաշտոնական արտադրողն է և ունի բազմաթիվ գիտական հետազոտություններ այս ոլորտում: Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ թե տարածքների մաքրման մեծ ծավալների հետ, այլ այն հանգանանքի, որ նախամքերքները բնության մեջ շատ երկար են բայրայվում և ունեն բացսական ազդեցություն շրջակա միջավայրի վրա:



ՀՀ բնապահպանության նախարարության փորձաքննության դրական եզրակացություն ստանալու հետո իրականացվել է փորձարկման առաջին փուլը, որը ավելի շատ հետազոտական նպատակ և մասշտաբ ուներ: Առաջին փուլը նման մակարդակով իրականացնելու անհրաժեշտությունը բացատրվում էր միկրորգանիզմների ակտիվությունը տեղային պայմաններում որոշելու համար:

Հետազոտման արդյունքները տվեցին մաքրման դրական աստիճան: Ներկայումս "Դին Գոլլ Մայնինգ Քամփինի" ՓԲ ընկերությունը իրականացնում է աշխատանքներ՝ յուղոտ տարածքների մաքրման վերը

նշված ծրագիրը արտադրական մասշտաբով  
ընդլայնելու ուղղությամբ:

Յուղոտ տարածքների մաքրումը բիոլոգիական  
եղանակով շահավետ է մի քանի նկատառումներով՝

- Էկոլոգիապես անվտանգ է, մաքրման  
արդյունքում չեն առաջանում երկրորդային քափոններ,  
որոնք վտանգավոր կլինեն շրջակա միջավայրի համար,  
այսինքն՝ ինքնին համարվում է մաքրման անթափոն  
պյոցես: Միկրոօրգանիզմները ունեն բնական ծագում և  
մահանալուց հետո առաջանում են այնպիսի  
կենդանական նյութեր, որոնք մտնում են հողի հումուսի  
բաղադրության մեջ,

- 1 կգ միկրոօրգանիզմների շտամպը հողերից  
ճեղքում է 1տ նավթաճրերի քափոն,
  - իրականացվում է բնապահպանական միջոցա-  
ում, որը նվազեցնում է բացասական ազդեցությունը  
շրջակա միջավայրի վրա:



## ԲԱԺԻՆ 5

### «ԿԱՆԱԴԱՓԱՅԼ» ԺՊԻՏՆԵՐ

Հարգելի՝ ընթերցող այս բաժնում տեղ են գտել զավեշտալի «քնապահպանական» արտահայտություններ, որոնց հեղինակները բնապահպանության ոլորտում ծավալում են ակտիվ գործունեություն։ Սակայն հարգելով մեր գործընկերներին՝ նպատակահարմար ենք գտնում հեղինակների անունները չիրապարակել։

Հուսով ենք, որ այս բաժինը հետագայում չի հարստանաւ։

#### Խակ այժմ ժպտացե՛ք:

«Ալավերդում գլորալ էկոլոգիական ճգնաժամ է»։



«Ընդերքաօգտագործման իրավունքի համար անհրաժեշտ հոդային հարաբերություններ»։



«ՀՀ բնապահպանական և միջազգային օրենսդրություն»։



«Խթանել համաձայնագրի և ՀՀ դի կողմից վավերացված այլ բնապահպանական համաձայնագրերի սիներգիկ փոխներգործության հնարավորությունների զարմացմանը»։

---

Պատասխանատու խմբագիր՝ Ա. Խակոյան  
Հեղինակներ՝ Հ. Հախվերդյան  
Գ. Մովսիսյան  
Տիտղոսաթերթերի լուսանկարները՝ Լ. Գրմեյանի